

10958



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 210 - 24

Նախաձեռնողը՝

«Ձենիթ Էներջի» ՍՊԸ

Գործունեությունը՝

Սևան համայնքի Գեղամական բնակավայրի վարչական
տարածքի № 6 հողամասում «Ձենիթ Սոլար» արևային
ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 210 - 24

«09» հոկտեմբերի 2024թ.

Սևան համայնքի Գեղամավան բնակավայրի վարչական տարածքի № 6 հողամասում «Ջենիթ Սոլար» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ջենիթ Էներջի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գեղամավան և Ծաղկունք բնակավայրեր

Ներածական մաս. Ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ հաշվետվություն/ «Ջենիթ Էներջի» ՍՊԸ կողմից նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գեղամավան բնակավայրի վարչական տարածքի № 6 հողամասում «Ջենիթ Սոլար» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ օրենք/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի՝ արևային կայանի կառուցումը, որպես նախատեսվող գործունեության տեսակ, դասակարգվում է Բ կատեգորիայի:

Նկարագրական մաս. Գործունեությունն իրականացվելու է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թ. մայիսի 17-ի N158-Ա որոշման համաձայն՝ «Ջենիթ Էներջի» ՍՊ ընկերությանը տրամադրված 6000կՎտ տեղակայվող հզորությամբ ԼԷ №0734 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի (մինչև 2045թ. մայիսի 18-ը գործողության ժամկետով), «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի (N ՏՊ-35/0086/1-Հ առ 10.07.2023թ. /բաշխման ցանցին միացման/ և NԴԳ 6881 առ 16.10.2023թ., NԴԳ 509 առ 28.01.24թ. գրությունները:), Սևան համայնքի ղեկավարի կողմից 2023 թ. օգոստոսի 23-ին տրամադրված N86 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 7.52635հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունն էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների և գործարկության նշանակությունը՝ էներգետիկայի:



Նախագծի իրականացման նպատակն է՝ ապահովել Հանրապետության էներգամատակարարման հեռանկարային պահանջարկը, պահպանել և բարելավել այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունում ներդնել նոր՝ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա:

Համաձայն հաշվետվության՝ նախատեսվող արևային կայանի տարածքը Գեղամավան բնակավայրի մոտակա տնից գտնվում է 2.7 կմ, Գագարին բնակավայրից՝ 218.5 մ, Սևան ազգային պարկից՝ 6.8 կմ, Սևանա լճից՝ 7.5 կմ, Հրազդան գետից 5 կմ և 0.14 կմ, Մ 4 միջպետական ավտոճանապարհից՝ 281 մ, «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ) երկրաբանական հուշարձանից՝ 4 կմ, այլ արևակայանից 203.2 մ հեռավորության վրա:

Տարածքում բացակայում են շենք-շինությունները, ջրամատակարարման և ջրահեռացման գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը, պատմամշակութային և բնության հուշարձանները:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Սևանի լեռների ստորոտին՝ Գեղամասար գետի ափին, մարզկենտրոն Գավառից 101 կմ հարավ-արևելք: Ռելիեֆն անհարթ բլրային է: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Տարածքը տափաստանային միջին լեռնային է (1400-2300 ծ.մ.բ.), իրեն բնորոշ տափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ:

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ, արևոտ, թույլ սառնամանիքներով եղանակը, չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Բնորոշ են զով, քամոտ ամառն՝ օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 4.2°C է, ձմռանը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ -8.2°C հուլիսին՝ 15.7°C, միջին հարաբերական խոնավությունը 74% է, տեղումների միջին քանակությունը կազմում է 583 մմ, քամու միջին տարեկան արագությունը՝ 3.3 մ/վ:

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների, գտնվում են 10.0 մ-ից ցածր հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Համաձայն 2020 թ. ապրիլի 20-ի ՀՀԵՆ նորմերի՝ տարածքը գտնվում է II սեյսմիկ գոտում 9 բալ սեյսմիկությամբ: Տեղամասի հաշվարկային սեյսմակայունությունն, ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ, կկազմի 0.4g:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բնության, պատմամշակութային հուշարձաններ չկան: Գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են:

Համաձայն տրված լիցենզիայի՝ նախատեսվում է 6000 կՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 35/0,8 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում և ենթակայանի միացում՝ «Ճ. Ջրառատ» 35 կՎ օդային գծի N71 АУ Սևան տիպի խարսխային հենարանին՝ ճյուղավորման սխեմայով: Ճյուղավորման կետից նախատեսվում է կառուցել համապատասխան երկարության 35 կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ:

Համաձայն հաշվետվության՝ արևակայանի փոխակերպիչները և ֆոտովոլտային պանելները տեղադրվելու են կոնստրուկցիայով: Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 11 804 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 610Վտ առավելագույն հզորությամբ՝ 9644 հատ, 600 Վտ առավելագույն հզորությամբ՝ 2160 հատ, որոնք 18 հատ 333 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միացվում են:



ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Ընտրվել են CanadianSolar ֆիրմային արտադրության 22.4-22.6% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 605-610 Վտ առավելագույն հզորությամբ բազմաբյուրեղ ֆոտովոլտային մոդուլներ, մոդուլի չափսերը՝ 2382x1134x30 մմ: Փոխակերպիչները Sungrow արտադրության, մոդելը SG350HX ցանցային տեսակի:

Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունն ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24 մ/վ է):

Ճյուղավորման կետից նախատեսվում է կառուցել միաշղթա 499.0 մ երկարության 35 կՎ լարման օդային գիծ: Ուղեգծում նախատեսված է 5 հատ 35կՎ ԱՄ «Սևան» տիպի խարսխային հենարանի տեղադրում: Լրացուցիչ լայնակից, 24 մ թռիչքով, հաղորդալարերը միանալու են նախագծային N1 ԱՄ «Սևան» տիպի հենարանին: Քանի որ կառուցվող 35/0.8 կՎ ենթակայանի 35կՎ մուտքը մալուխային է, ՕԳ-ի վերջին N5 հենարանի վրա իրականացվելու է օդային գծից անցում մալուխագծի: ՕԳ-ում նախատեսված է AC-70/11 տիպի հաղորդալարի մոնտաժ, թռիչքներում ապահովված է միջֆազային հեռավորությունները և հողից 7 մ բարձրությունը: Հիմքերի տակ նախատեսված է 100 մմ բարձրությամբ, խճի նախապատրաստական շերտ:

Էլեկտրահողորդման գծի ուղեգիծն անցնում է Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի Ծաղկունք և Գեղամավան բնակավայրերի համայնքային՝ չմշակվող հողերով՝ Ծաղկունքում՝ 258 մ, Գեղամավանում՝ 241 մ, ընդամենը 499 մ:

Յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ ցածր լարման վահաններ էլեկտրամատակարարումն իրականացվելու է այլումինե հաղորդաջղերով պոլիվիլիքլորիդե մեկուսացմամբ, հարթ ժապավենով մետաղե զրահով, որի բարձիկներում պաշտպանիչ շերտը բացակայում է, արտաքին ծածկույթը պոլիվիլիքլորիդ նյութից АВБ6ШВ տիպի 3x150 մմ 2 հատույթի մալուխագծերով: Բաց տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են, իսկ փակ տարածքում՝ IP 31 տիպի: Ստորգետնյա մալուխագծի երկարությունը կազմում է 26.0 մ:

Շանթապաշտպանությունն իրականացվելու է 2 հատ C-35 տիպի ճոպանով: Ճոպանի մոնտաժը նախատեսված է N2-N5 հենարանների հատվածում: Մեկ ճոպանի երկարությունն ուղեգծով կազմում է 335.0 մ: Հաղորդալարերի մեկուսացման համար նախատեսված են ապակյա մեկուսիչներ: Բացառություն է N71 հենարանի լրացուցիչ կոնստրուկցիային մոնտաժվող շարանները, որտեղ նախատեսված են 6-ական մեկուսիչներ՝ ճյուղավորվող հաղորդալարերի իջեցումները հենարանի կոնստրուկցիայից հեռացնելու համար: Հենարանների հողակցումը նախատեսված է ճառագայթային հողակցիչներով՝ Ø12 մմ կլոր պողպատով՝ յուրաքանչյուր հենարանի համար նախատեսված հողակցման սարքվածքով, պահանջվող նորմատիվային դիմադրությանը համապատասխան:

Նախատեսվում է լուսավորության հենարանների տեղադրում ստորգետնյա մալուխագծերի անցկացումը, լուսավորության ավտոմատ ղեկավարման արկղի մոնտաժումը և սնուցումն իրականացնել՝ 25կՎԱ/0.8/0.4կՎ ՏԵ-ի 0.4 կՎ վահանից:

Նախատեսված է տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում արտաքին տեղադրման տեսախցիկներով, որոնք արտացոլվելու են պահակատան էկրանին:



Ֆոտովիզուալային կայանի հողանցումն իրականացվելու է համաձայն СНиП 3.05.06-96: Հողի մակերևույթին 0.6 մ խորության վրա հավաքվելու է հողանցման սարքվածքը (կոնտուրը):

Նախագծով նախատեսվում է արևային կայանի և ենթակայանի տարածքի ցանկապատում, արտաքին լուսավորության ցանցի և տեսանկարահանող սարքերի տեղադրում: Ցանկապատումը նախատեսվում է 2-2.4 մ բարձրությամբ մետաղական ցանկապատով: Էլեկտրակայանի մուտքի մոտ նախատեսվում է 14.7 մ² մակերեսով շարժական վագոն տնակ՝ պահակատուն՝ սենդվիչ պանելային պատերով: Տարածքի մուտքը հյուսիսային կողմից է:

Համաձայն հաշվետվության՝ գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու է գործունեության ենթակա տարածք մոտեցնող՝ գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:

Արևակայանի և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիաների հիմքերի բետոնացման աշխատանքների, հենայունների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ:

Տարածքում վառելիքի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի, հաստատուն հոսանքի մալուխների, փոփոխական հոսանքի մալուխների անցկացման խրամուղիների, հողանցման կոնտուրի, ենթակայանի տեղադրման, յուղահավաք հորի և ցանկապատման ու արտաքին լուսավորման հողային աշխատանքներ: Հաշվարկներն իրականացվել են ըստ նախագծային լուծումների, համաձայն որի հողի հանույթի ընդհանուր ծավալը կազմում է 1154,0 մ³, որից 719 մ³ կատարվելու է հետլիցք, մնացած 40 մ³ կհեռացվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր, 35 մ³ հողաբուսաշերտը կօգտագործվի տեղում բարեկարգման նպատակով:


Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 2 տարի՝ ըստ ժամանակացույցի: Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝ 3 հորատող, 1 հարթեցնող, 1 ինքնաթափ, 1 ավտոաշտարակ, 1 էքսկավատոր, 1 աշտարակային կռունկ և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէրով, աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող շարժական 1 հատ բիոզուգարանից՝ լվացարանով:

Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Առաջանալու են մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ սև մետաղ 10 կգ, ալյումին՝ 3 կգ և պղինձ՝ 4 կգ, շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբ՝ 35 մ³ ծավալով, կենցաղային աղբ՝ 4200 կգ/տարի քանակով և այլն:

Արևային կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ:



հալոգեններ, դեֆլիդներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր՝ 5.3 մ³ ծավալով, ինչպես նաև յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, սև մետաղի ջարդոն, որոնց քանակները ևս ներառված են հայտում: Վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները տրամադրվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված վահանակներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 7մ² մակերեսով փակ պահեստային շենքում՝ շարժական մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի Հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Հաշվետվությունում նախատեսվել են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ, որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

Համաձայն հաշվետվության՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են ՇՄԱԳ-ի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, մասնավորապես.

- օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան՝ ջրցան մեքենայով, չոր և շոգ եղանակներին,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավացումը կատարվելու են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,
- տարածքում նույնպես պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա՝ հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով,
- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով ենթակայանի տարածքում տեղադրվելու է 1 հատ՝ 0.5 տարողությամբ



ջրի բաք,

- շինհրապարակում տեղադրվելու է 1 հատ 1.1 մ³ տարողությամբ պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հավաքման և հեռացման նպատակով,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- արևային կայանի վահանակների մաքրումը կատարվելու է բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար տեղադրվելու է 500 լ տարողությամբ փակ բաք,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- գործունեության ենթակա տարածքում, կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաժեշտությունից ելնելով, նախատեսվում է մշակել գործողությունների պլան՝ առաջնորդվելով Կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու և տեղափոխվելու են աղբավայր,
- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար,
- արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ շենքում՝ վազոն տնակում, մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, օգտագործված, գոյություն ունեցող ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

Համաձայն հաշվետվության՝ շահագործման ժամկետի ավարտից հետո, ընկերությունը հետագա շահագործման հնարավորությունների բացակայության պայմաններում, կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի՝ նախկին տեսքի բերում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և



շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ, որոնց հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով, իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, պաշտպանության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզպետարանը, Սևանի համայնքապետարանը, Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները,

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն և այլն/ մոնիթորինգ, կազմել հետնախազձային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Արևային կայանի շահագործման ժամկետի ավարտից հետո հետազոտող գործունեությունն իրականացնել՝ համաձայն հայտում ամրագրված միջոցառումների:



- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել Կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Ջենիթ Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սևան համայնքի Գեղամավան բնակավայրի վարչական տարածքի N° 6 հողամասում «Ջենիթ Սոլար» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Շերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան